3121

1844 80.

[ARMENIAN.]

Miscellaneous.] [*No.* 21.

FRIENDLY HINTS

ON THE

OBSERVANCE OF THE LORD'S DAY.

ԲԱՐԵԿԱՄՈՐԷՆ ՅՈՐԴՈՐՄՈՒՆՔ

Վասն

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՆ ՍՈՒՐԲ ՊԱՀԵԼՈՅ

Թոյլ տվէք ինձ որ յոյժ փափաքմամբ կամիմ ձերոյ ջերմեռանդութիւնն հաւելացանել և խոնարհաբար աղաչելով որ ունկնդիր լինէք բանիս, քինչ մինչև օրս գուցէ փոքր լինէք մտածել, և քինչ յոյժ խորին մեզ վերաբերելի բանայ. այսինքն մեր զանց առնել, և Կիրակին կոտրել:

Ամենակարօղն Աստուած հեփ որ աշխարհս ստեղծէց. Շաբաթի Օխտն օրից մին օրն ջոկէց. և յատկացրէց վասն իւր յատուկ ծառայութիւն և փառաբանութիւն մատուցանելն. որպէս Աստուածայշընչի ծննդոց գրքումն, գլուխ. Բ. համար. Յ. գրածայ թէ օրհնեաց Աստուած զօրն եօթներրորդ, և սրբեաց զնա, զի 'ի նմա հանգեաւ յամենայն գործոց իւրոց զոր սկսաւ առնել Աստուած: Զկնի այնորիկ հեփ Տասն Պատգամքի Օրէնքն Աստուած տվէց Իսրայէլացւոց Ազգին՝ Սինայ Սարի վերայ. Եւ. ԺԹ. Կ: Է. Աստուած դարձեալ ահաւոր և սաստիկ ձևով պատուիրէց սուրբ պահել զօր Շաբաթուն: Դուք ամենեքեանդ քաջ գիտէք Զորրորդ Պատուիրանն՝ որ ասէ յիշեա զի սրբեսցես զօր Շաբաթուն և այլն: Այս ահաւոր Պատուիրան, և օրինադրութիւնն շատ

տեղ կայ յիշած սուրբ Աստուածայշնչի միջին. էտից մինն ձեր միտն բերեմ որ է Եսայեայ Մարգարէի գլուխ. ծբ. համար. 13. և. 14. որ ասէ. «եթէ դարձուցես զոտն քո չառնել զկամս քո յաւուրն «սրբութեան. և կոչեսցես զշաբաթն ափուկս նուիրեալս Ա«տուծոյ. և փառաւորեալս: և ոչ փոխեսցես զոտն քո 'ի գործ, և «ոչ խօսեսցիս բան ինչ բարկութեան բերանով քով. և եղիցիս «յուսացեալ 'ի Տէր: Եւ տարցի զքեզ 'ի բարութիւնս երկրին, «և ջամբեսցէ քեզ զժառանգութիւն Յակովբայ հօր քոյ. զի «բերան Տեառն խօսեցաւ զայս:" Նաև սուրբ Աւետարանումն ունիմք մեք հաստատութիւն որ մեր ամենօրհեալ փրկիչն ամենայն կերպ պատուէց զօր Շաբաթուն, քանզի իւր կանոնաւոր սովորութիւնն էր որ համէն շաբաթ օրերն գնամանէր ժամատունն, ուսուցանել ժողովրդոց, կատարել գործս ողորմութեան, և այլ բարեգործութիւն էր առում. Ղուկ. 6. 6: 13. 10: Յոհ. 9. 14:

Գուցէ՝ Տասն Պատգամքի միջի ոչ մինն էնքան կրկնակի և ստէպ ստէպ չկայ յիշած Աստուածայշնչի զանազան տեղում որքան որ Շաբաթի սուրբ պահելէ Պատուիրաննայ միշտ ամենայն տեղ յիշած: Եւ թէ կամենամք Աստուածային բանի ոգին իմանալ էսայ որ Աստուած կամեցաւ համէն վեց օր բան գործ առելից յետ. մին օր անգործ և անվաստակ մնալով նոյն օրն մեր հոգին մտածեմք, և հոգևոր բաների հետևեմք: Զան որոյ ամենայն գործք, Աշխարհային բաներ, առ տրի զբաղմունք, մարմնաւոր հաճութիւնք և հեշտութիւնք, և այլ ամենայն բաներ՝ որպէս Տերունական աւուր պատուոյ ներհակ և հակառակ լինին, հարկիւ բոլորովին ընդդէմ կլինեն. և հակառակ կամացն Աստուծոյ: Կիրակի օրն ձերն չէ՞. այլ Աստուծոյայ: Էտ օրի սահմաններն սուրբայ այսինքն ամէն սահմն սուրբայ քինչ ձեր կամքով հանցկացանելէ չէ՞ էտ օրի սահմաններն մեք պիտի տամք Աստուծոյ որ է ընծայեմք ծառայութեան, և պատուոյ՝ մեր մեծափառ Ստեղծողին և փրկչին:

Աւելորդ համարիմ ձեր միտ գձել, թէ քանի՞ցս անգամ և ո՞րքան կերպիւ այս սուրբ օրն չեն պահում, և նախատելով զանց են առնում ամենայն շրջակայ տեղարէնքում: Բայց սարսափել ի՞

չի արդեօք մտածել, որ բազում ֆամլաց տներում, դժուարին են ջոկութիւն կամ խտրութիւն առում 'ի մէջ Կիրակի օրի և միւս վաստակի օրերին: Կիրակի օրի սհաթներն առաւօտն էնպէս են անցուցանում որպէս միւս վաստակի օրերն: Տան Պարոնն գնամանայ իւր սովորական վաստակն վաստակել, կամ այլոց փոշ հատուցանել. կամ շորի կարելէ համար ճոթ առնել, կամ իւր այգին բըրել: Մինոյն ժամանակումն նորա տան ֆամիլքն ևս վռազ ղալաբլուղ բանիան. ՝ի Տունն պիտի թափ տալ. և յիստակել. կօշիկներն սևացանել. խիզանին Կիրակի օրէն զարդարած շոր խագցանել, և Կիրակի օրէն ճաշ և կերակրի սարանջամ տալ, այսպէս բազում նեղութիւն և դժվարութենից յետ բառունք թէ տան Տիկինն ջանամանայ որ միանգամ ժամումն արևայ:

Ջկնի այս մի միայն մին անգամ ժամ գնալից պռծանելէն երեկնապահին տան Տիկինն անցուցանումայ վիզիթ գնալով իւր դրկցներին, անշահ զլուց տալով կամ քէֆ առելէ փասիայ գնալով, և ընդունայն շողլխաթով և դէնն տան Պարոնն ընկերակիցայ լինում իւր ուրախ ընկերաց հետ թաւէռնումն և տեղն անպարկեշտ խաղէր կանչելով բարձրաձայն ծիծաղելով և խօշտապ անելով, կամ գուցէ երդում ուտելով և հայհոյութիւն անելով Կիրակի օրէն երեկնապահի սուրբ սահաթներն փուչ ու անշահ բանումայ անցուցանում:

Կամ եթէ էս անկարգ բանէրն էս հադն չլինեն խասացանում, մտածէք թէ քանի՞ քանի՞ ֆամիլք բաւականան համարում միայն Կիրակի օրէն մին մասն ըստ պատշաճին անցուցանել. բայց մնացեալ մեծի մասն զօրվ առելով և հեշտասիրութեամբեան անցուցանում:

Բազում իրաւասէր և պատուելի աշխատաւորք, երկրագործք կամ վաստակաւորք, որ թաւէռն չեն գնաման և բոլոր շաբաթն սաստիկ վաստական անում, նանքան շատ ծանր և մեծ ջաբրան համարում եթէ այս հանգստութեան սուրբ օրումն փոքր ինչ ժամանակ չգտանեն իւրեանց բարեկամացն վիզիթ գնալէ կամ իւրեանց դրկցների հետ չայ խմելէ, և կամ իւրեանց տան և ֆամլի բանների վերայ խօսելէ. նաև շատոնք էլ էնպէսան որ վասն չքաւորութիւնն Կիրակի օրէն սրբութեանն փոյթ չունենալով՝ թոյլան տալման բազում կերպ աշխարհային զբաղմունքօվ Կիրակին կոտրել, որ թէպէտ

իւրեանք իմամանան և ընդունումն որ սխալայ, բայց որով հետև իւրեանց ֆամլի կառավարութիւնն չեն կարողաման կարգադրել վասն փողի սխալութին. վասնորոյ չեն կարողաման որ էտից հեռանան : Էտպէս անձանց խմարայ յատկապէս էս յիշատակութիւն գրելն :

Ուրեմն՝ ինձ արձակութիւն տվէք՝ նախ ցուցանել ձեզ՝ ձեր վարուց մեղքն յանդիման Ամենակալին Աստուծոյ :

Յառաջագոյն ասացի ձեզ, որ Աստուածային Պատուիրանն և Հրամաննայ որ օր հանգստեան Շաբաթուն, սուրբ պահել: Ուրեմն պարտիք մտածել, յամենայն ժամանակի՝ երբոր թոյլ էք տալման որոք անհարկ Աշխարհային զբաղմանց կամ ընդունայն բանէրի պարապեցուցանել ձեր միտքն էն օրն, դուք բոլորովին ընդդէմ և հակառակ էք վարման հաստատութեան Աստուածային օրինաց ՝ի էն Օրէնքն քինչ դուք նոյն Օրէնքովն պիտի դատապարտեալ մնէք ՝ի վերջին օրն Դատաստանի. Յօհ. ԺԲ. 48: Ամ երբէք էս Պատուիրանքն ձեզ չէր տալէց, եթէ իւր միտքն էն չլինէր որ դուք հնազանդիք իւրն, կամ հետևիք իւր Պատուիրանին եթէ գողութիւն առելէ կամ սպանութիւն կամ շնութիւն գործելէ մեղքն ձեր մտքովն հանց կայ. ուրեմն կդողէք և կսարսափիք, ուրեմն ընդդէմ չէք դողման և սարսափման, Կիրակի օրն՝ սուրբ չպահելն : Մի թէ հաւասարապէս մեղք և վտանգաւոր չի՞ Զորրորդ Պատուիրան կոտրելն, որպէս և Վեցերրորդ կամ Եօթներորդ Պատուիրանն : Մի թէ սպասումէ՞ք ձեր միտն գձեմ, թէ էնքան մեղաւորք և ամբարիշտք որ մեղքի մէջան ընկէլ վասն միւս Պատուիրանքն չպահելն. ապա նանցան մեղք գործելէ սկսուածքն շրուայ ելէլ Զորրորդ Պատուիրանն կոտրելովն որէ Կիրակի օրն սուրբ չպահելովն :

Դարձեալ՝ մտածեցէ՞ք ո՞ր քան կամ ի՞նչպէս անպատիվէք առում Աստուծոյ: ըստ որում եթէ որոք Երկրաւոր թագաւոր ձեզ պատուհրաւիրէր առ ՝ի կատարել որոք մեծ հանդէս տօնախմբութեան և եթէ դուք չգնիք նորա պատիւն, մի թէ նա արհամարհութիւն չէր համարելէց, եթէ դուք ձեր սովորական վաստակի յետանէն մնալով չկամենիք նորա շնորհալի հրաւիրմունքն ընդունիլ: Բայց և այնպէս՝ թագաւորն թագաւորաց հրաւիրումայ ձեզ որ միայն նորա համար Շաբաթն մին օր պարապէք. որ է մին Շաբաթական

օրն նոյնա սուրբ ուրախութեան նուիրել 'ի յիշատակ երկու էնպէս մեծամեծ բանի քինչ էլ երբէք 'ի վերայ Աշխարհի չի պատահել (արարչութիւնն և փրկութիւնն) որ է Աշխարհիս ստեղծագործութիւնն. և Աշխարհիս փրկութիւնն խաչելութեամբն և յարութեամբն Փրիստոսի Աստուծոյ: Եւ դուք արհամարհումէք էտ ժամանակին!! Ձեր Աշխարհային բաներն շատ հարկաւոր էք համարում: Եւ էնպէս պատասխանէք ուզում. տալ որպէս սուրբ Աւետարանում գրածոյ թէ "աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրաժարեալ" Ղուա. 13. 16—19:

Մտածեցէք նաև՝ թէ հոգևոր ուսումն ստանալէ ինչպէս պատուական ժամանակէք տանուլ տալման ձեր օրական գործն և վաստակն շատ փոքր ժամանակայ տալման ձեզ բան գործի օրերում Գիրք կարդալէ և հոգևոր բանէրի յառաջադիմութիւն առելէ: Ուրեմն եթէ Կիրակի օրն ևս նոյնպէս բանէրի գործոյ հետևէք և դատարկասիրութեամբ, և զօրվ առելով անցուցանէք, ուրեմն ձեր յաւիտենական հոգևոր շահաւէտութիւնն դոր պիտի գդանէք: Մինչդեռ դուք ձեր մարմնաւոր հոգացողութիւնն էք առում, ձեր հոգին զուրկայ մնման, և ձեր հոգւոյ ուսմանց համար՝ յատկապէս Աստուած յատկացրէլայ էտ մին օրն:

Վերջապէս՝ մտածեցէ՛ք թէ ի՞նչ անէծք էք բերում ձեր Աշխարհային գործոց վերայ: Աստուածաշունչ գրքումն գրածայ թէ "Օրհնութիւն Տեառն 'ի գլուխս արդարոց, և նոյն մեծացուցանէ, և ոչ ևս յաւելանայ տրտմութիւն 'ի սիրտ նորա": Առա. 10. 22: Այս Աստուծոյ խոստմունքն միշտ ճշմարիտայ ելէլ: Եւ Սողոմոն իմաստունն ասումայ. "Լաւ է փոքր բաժին երկիւղիւ Տեառն, քան զգանձս մեծամեծս աներկիւղածութեամբ" Առա. ԺԵ. 16:

Բայց բազում դժուարութիւնք, և արգելքայ պատահման ձեզ, որոյ աղագաւ դուք ինչպէս կամեմանէք էնպէս չէք կարողման սուրբ պահել օր Տեառն: Այժմ տեսնենք ի՞նչան էտ դժուարութիւնքն: Դուք ունիք բազում հարկադիր գործ, որ պիտի նոյն օրն կատարէք այսինքն, խիզանին պիտի անտես չանէք. տաւարներին և ձիանքոց պիտի դարման տէք. կաթնի զգուշութիւն պիտի առէք. անաջեղինաց իւրեանց եղանակումն պիտի չօքիդարութիւն

անէք. Ոչ խարներին յատկապէս գարնան եղանակումն. անդադար հետևողութիւն պիտի առէք: Ուրեմն էստոնքան հարկաւոր և պարտականութեան բանէր որ օրինաւոր կարգի և կանոնի ներքոյ չափաւորապէսն՝ ընդդէմ օրինաց չի. Մաթ. ԺԲ.1—13: բայց եթէ չլինի էտում մեծ զգաստութիւն. ուրեմն նոյն հարկաւոր բանէրն մեղ կի թալակ կդառնայ ձեզ համար: Իջարդար Գեղականն կամ մշակն որ է վաստակաւորն՝ որ իսկապէս իրձունի սուրբ պահել Աստուծոյ օրն, կջանայ 'ի ներքոյ այս ամենայն պարագայից՝ այնպէս իւր պարտականութիւնքն և գործքն կատարել, որ որքան որ կարևոր է Կիրակի օրէն սուրբ պահելէ ընդդէմ չլինի: Այս ամենայն գործքն և պարտականութիւնքն նա այնպէս կհամարի՝ որպէս մին առկայի կամ անձար արգելմունք իւր Հոգևոր ծառայութեան մասնաորապէս չկատարելն. բայց ոչ թէ որպէս օգր կամ պատճառ նշանց տալ վասն բովանդակապէս չկատարել Հոգևոր ծառայութիւնն: Խոհական կառավարութեամբ մարդս շատ բան կարող կլինի առնել: Կիրակի առաւօտն փոխանակ հասարակ սովորութենից հետի վերկալէ թող տան եղեալքն. կամ ֆամիլն կանուխ վերկան և ինչ որ իսկապէս հարկաւոր բանէր լինի էն առեն և մին մին անգամ այս ոնային բանէրն՝ Տան եղեալքն կարողան իւրեանց միջումն բաժանել, էնպէս որ յամէն անձն՝ որքան կերևորայ ժամանակ ունենայ Աստուածապաշտութեան հետևել: Յերեկնապահին և ս կարեն սոյն ձևովն ընթանալ: Առաւել քան զամենայն՝ բոլոր օրն պիտի ունենէք զոգին Շաբաթական. այսինքն Կիրակի պահելէ միտք և դիտաւորութիւն ունենալ թամամ օրն. և սուրբ պահել: Եթէ էտպէս Աշխարհային շատ հարկաւոր բանէրն նաչար պարտականութիւնայ անելն. բայց ոչինչ հարկաւորութիւն չկայ Աշխարհային փառ փուչ խօսվածկութիւն անել: Ձեր միջում Կիրակի օրէն նշանն պիտի լինի Ոգի հանգստեան, հանդարդութեան և

սրբութեան։ պիտի աղօթք անէք. որ ձեր միտքն առանց զալաբալուզ խաղաղ մնայ. և զոր ինչ ժամանակ անցուցանէք էտ հարկաւոր գործքումն. (քինչ յետ գձելէ չի) երբէք անշահ չի լինելէց ձեզ համար։

Բայց ուրիշ արգել և ս դուսայ գոլման այսինքն մինն ասումայ, ես մէրամ. և մին բօլուկ խիզան ունեմ, և իմ գերմականին ինձ ժամանակ չեն տալման՝ որ կարոզանամ ժամ գնալ, և կամ իմ առանձին գիրք կարդալ։ Այս է իրաւի մեծ դժուարութիւն։ եթէ փոքրիկ երեխայն լինի կաթնկեր, և մօր տունն ժամից յերկար լինի, գուցէ՝ կացութիւնն նկատելով՝ գրեթէ անկարելի լինի վասն մօրն, մին քանի ամիս երթալ յեկեղեցին. բայց միայն եթէ կարոզանայ առանց դժուարութեան երեխայն գրկած տանել իւր հետ ժամ։ Հէր էս պէս արգել վերաբերեալ լինի էնչաղն մայրն պիտի ամենայն կերպիւ հետևողութեամբ իւր մեծ խիզանին աղարկի Կիրակի օրէն ուսումնարանն * և ջանանայ իւր տան եղելոց կամ ֆամլի մեծի մասն գնան Աստուծոյ տունն, և ինքն տանն իւր գերմակ խիզանին մօտ Աստուածաշունչ և այլ բարեպաշտութեան գրքեր կարդայ. և ուսուցանի քննել զանձն և աղօթս մատուցանել առ Աստուած։ Այն մայրն, որ 'ի սրտէ ուղիղ ջերմեռեան-

դութեամբ փափաքմանայ Կիրակի օրէն օրհնութեանն. կգդանի

* Ինգլիէս տուաւօրէն ժամէցն յետ. Պաօրէսպանի Քահանայ. խիզանին

նոյնն 'ի ծածուկ, թէ և ներկայ ինքն զրկածայ մնման ժամ-
ին։ Բայց շատ անդամ և շատոնց մասին, այս դժուարութիւնն՝
կարևոր կլինի բառնալ։ Ըստ որում Տան Պարոնն, կամ մեծ
Դուստրն՝ լաւ կարող կլինեն կառավարել գերմականուն մին
երկու սհաթ Կիրակի օրէն միջումն, կամ կարևոր կլինի սոցա
վերդնել դրկցի պահպանութեան ներքոյ, մինչ ծնողքն և մեծ
խիզանանին երթան 'ի տունն Տեառն երկիրպագանել։ փոքր ինչ
կառավարութիւն, և միմեանց փոխադարձ օգնականութիւն՝
բաւական կլինի էսպէս առնել†։

Բայց կայ այլ միւս ևս պատճառ, որ բազմաց արգելայ լինում
որ օր Տեառն սուրբ պահեն։ Դուք երկիւղ էք կրում, որ խիստ
Կիրակի պահելով՝ ձեր Աշխարհային բանէրին վնասակարութիւն
կլինի. ձեր Աղէն Հոգևոր բանէրի օգուտն չի տեսման. այսինքն
Կիրակի չի պահում. և եթէ դուք որ նորա ծառայումէք չկամենէք
նորայ համար Կիրակի օրն բանի կէք. ուրեմն նա ձեզ իւր ծառայու-
թիւնում չի պահելէց։ կամ գուցէ դուք, առուտրի գործոց միջում
լինէք և ձեր ծանօթ վաճառականքն գոն ձեր մօտ Կիրակի օրն,
երբեմն կպատահի որ երկար ճանապարհից կգան, կկամենան կտաւ
կամ ճոթ չափել, կամ իւրեանց հետ փող կբերեն բլի (Մուրհակի)
հատուցումն առնել, և կամ կգան նոքա իւրեանց Շաբաթական
ուտելիքն առնուլ ձեր շապիցն (դուքանէն)։ և Կիրակի օրն
էլ առաւել յաջողակայ նանցան համար՝ քան թէ այլ որոք հասարակ
օր։ Դուք էնչաղն ի՞նչ պիտի առէք։ եթէ նոցա կամքն չաշխատէք,
ձեր գործոց։ և ձեր ապրուստին վնասակարութիւն վերայ կգոյ։
'Ի պատասխանի այս դժուարութեանն դուք պարտականէք նկատել
թէ ինչայ ձեր Դաւանութիւնն։ Արդարայ որ դուք առևտուր
առողջ վաճառականէք, բայց կխոստովանէք որ դուք քրիստոնեայ

Հիշողվեն ժամապոնն. և յետ փոխարոնէաչանութիւն նշանարդացնեն. և ովքոր
հարդաւ չէ հարող. հարդաւ հանավորացնեն։ այս չափ այլ օրինաւոր չանայ։

† Վէց համ Եօթն դրնցի, հանդոնեն հատավարէ ոնոնց գերմա-
հանուն, ժամ ժամանաչոմ, փոխուաչի կիրաչի օրերուն։ էսպէս լինե-
լով. ոն որ. ոտայն ոն անգամ ժամցն յեր հանի, վէց համ Եօթն
Շաբաթայոջուն։

վաճառականէք։ Պարտականութիւն ունէք դուք առ Աստ ձեր *. և էս պարտականութիւնն ոչինչ պակաս չի քանթէ էն պարտականութիւնն, որ դուք ունէք առ ձեր անձնն, և առ ձեր ծանօթ վաճառականքն, և երբ Աստուածային պատիւն մէջայ գոլման դուք պարտականէք, առաւել Աստուծոյ հնազանդել՝ քան մարդկան· Գործ. Ա.19. և էտայ ձեր պարտականութիւնն և ձեր շախն որ էտպէս անէք· և էսպէս անելով դուք կարողէք ցուցանել ձեր սէրն առ Աստուած և փրկիչն։ Եթէ խղճմտանքն քեզ ցուցանումայ որ դու Աստ կամաց հնազանդութեամբնաս ընթաման ուրեմն Աշխարհիս ասողութիւնքն ընչուր պէտքայ։ Աստուած պարզապէս հրամայումայ քեզ որ իւր՝ օրն սուրբ պահես և դու միայն էս Պատուիրանին հնազանդելով կարօղաս նորայ օրհնութիւնն քոյ բան գործի վերայ բերել ակնկալութիւն պահել· Ուրեմն ընթացքն որ պիտի ընթանաս էտայ։ Քոյ աշխատանքի Շաբաթամիջի վեց օրումն երկու տակ վաստակ և ջանք արա որ քոյ Աղին բաւարարես և հաճոյացանես· կամ քոյ ծանօթ վաճառականաց հաճելի դառնալէ կերպն էսայ· որ դու բովանդակապէս արդարութեամբ ջաղդաստութեամբ և ուղղութեամբ վարվես նոցա յետ՝ի վերայ խղճմտանաց· և միանգամայն հեռանաս այն ամենայն գերմակ խաբէական բանէրից և գաղտնի

---

* Մէջ բէր Մէջբուլեան օրէն Խոսրովանէ· որ պատրաստանէլով աոէլաս։ Հոմէր Մէջէլ· և պրէտուանալ· պլուրէլ՝ է բէ-աց· ծառայէլ Աստուծոյ։ Եւ։ Հրաժարէմ՝ է սատանայէ, և ամենայն խաբէութիւնէ նոցա· ՝է պատրանաց նոցա· ՝է խորհրդոց նոցա· ՝է գեղացէց նոցա, ՝է չար հոմաց նոցա· ՝է չար հրեշտակաց նոցա· ՝է չար պաշտօնէէց նոցա· ՝է չար հոմարարաց նոցա· և յամենայն չար սովորութիւնէ նոցա հրաժարէլով հրաժարէմ, դառնամ՝ է ընդ Աստուած գերութիւնն։ Եւ Եւ։ Հաւատամ Ամենաստուծ էրդրդութիւնն· Հայր և Որդի և Սուրբ Հոգին· ՝է աւետարանն գաւրէրէլէ· ՝է յղութիւն Մարիամայ։ ՝է ծնունդն Փրկչին։ ՝է Մէղրութիւն· ՝է գնօրէնութիւնն։ ՝է հոմաւորք չարչարանքն։ ՝է հրէութիւն։ Զերեք օրեայ թաղումն։ դերանէլի յարութիւն։ զԱստուածաշունչ հոմբարձումն։ Եւ գնուրէլն ընդ աջմէ Հօր· գալուստն և գթաւորելոյ· զմեռանելոց գալոյն խոսրովանիմ Եւ հաւատամ։ այս չարչարանս այս պերքուէլի ընդհանրի օրէնաւորութիւն չէնայ։

առուտրից քինչ մին հասարակ բանայ դառցէլ ողջ առևտուր առողաց միջումն։ Յայնժամ քոյ ծանօթ վաճառականքն՝ քեզ հետ առևտուր առելոյ օգուտն կհիմանան։ Էն հաւատն կընծայեն նոքա քոյ խօսկին, որ քրիստոնէական արդարութիւնն միայն կարէ գոյացուցանել. և նոքա շնորհակալ կլինեն վասն նեղութեանցն՝ զոր կրումաս հաճոյանալ նոցա։ Երբ Կիրակի օրն մօտկամանայ, թող հասարակապէս իմանան որ բան և գործ չի լինելէց քոյ տանն։ Թող քոյ շապն (փուֆանն) պիրկ ամրած լինի առաւօտից մինչ. երեկոյ, ամենայն սովորական գործ արգելած մնայ, դու և քոյ տան եղեալքն ժամանակին ժամ գնացէք։ Եթէ շատ հարկաւոր լինի, շապն (փուֆանն) մին սահաթ աւելի բաց պահիր Շաբաթ երեկոյն, կամ երկուշաբաթ առաւօտն գործդ սկսիր փոքր ինչ առաւել կանուխ քան թէ սովորական ժամանակն և ջանացիր անհարկ նեղութիւն չպատճառել քեզ հետ առուտուր առողաց, դու ինքդ գնալով նոցա տունն վասն այն բանին և գործին՝ որ նոքա սովորութիւն ունեն բերել առ քեզ Կիրակի օրն։ Եթէ 'ի վերայ խղճմտանացդ կհետևես այսպիսի սովորութեանց, քոյ դժուարութիւնքն փոքր փոքր կբարձվի։ Գուցէ ոմանք անխղճմտանք առևտուր առողք քեզ բաց թողուն տհաճութեամբ. Բայց 'ի միջի նոցա խոհականքն և խղճմտանք ունեցողքն առաւել կպատուեն քեզ վասն քոյ բարի դիտմանն, և կյարգեն քեզ առաւել վասն քո ուղղութեան։ "Յուսա 'ի տէր՝ և արա զքաղցրութիւն. բնակեաց յերկրի՝ և հովուեսցես 'ի մեծութեան նորա։" Սաղմ. ԼՂ. 3։

Մին այլ դժուարութիւն ևս գուցէ դուս գոյ որ է Կիրակի օրէն պարտականութեանցն պինդ հետևելով. այսինքն Կիրակի պախելով կրիօզդադի (ՠճայիպ) կամ նշանաւոր արևէք. և ձեր վերայ խօսեն. մինչդեռ դուք չէք կամեման յայլոց է հատկացեալ արևալ և կամ գործով զանազան լինել. երկնչիք թէ ձեր դրկցնին ծաղր կանեն ձեր հաւատն։ Այս մին վիշտ է՝ որ դուք պարտիք ակնունիլ. և կրել։ Ղուկ. Ի. 23։ Յոհ. ԺԶ. 2։ Բայց ի՞նչ կելնի էտով. միթէ նոցա ծաղր առելն ձեզ իսկապէս որոք Ինաս վերայկբերի, թէ ևս դուք պարտաւորվէք նոցա ծաղրաբանութիւնն անձամբ լսելն և համբերելն։ Դուք դաւանումէք ծառայել Քրիստոսի որ ինքն անձամբ բազում էտպէս ծաղրաբանութիւնքն լսէց և

տարեավ համբերութեամբ. Մաթ. 10. 25։ 27. 41։ և միթէ դուք որ հետևողք էք այն օրհնեալ փրկչին, դոր կելնի որ ակնկալ լինէք ազատ մնալ միանգամայն էտպէս ծաղրաբանութենից։ Կրօնն Քրիստոսի աներկբայ շատ զանազանայ Աշխարհիս կրօնից, վասնորոյ և աշակերտք Քրիստոսի որ են Քրիստոսեանք պարտականան դուս գոն և բաժանած հատուկ մնան. 1. Կոր. Է. 10։ Յայ. 18. 4։ Բայց էս վշտաց երկիւղն շատ անգամ մեծայ քան թէ իսկութիւնն։ Անհաստատ և անհիմն հաւատացեալն ըստ արժանւոյն մեզադրանօք խայտառակմանայ։ Բայց իսնարհ հանդարտ և հաստատուն քրիստոնեայն որ կարգադիր բանից հպատակելով գործածութիւն կունենայ, հազիւ երբէք, էս կենացն վնաս կկրի իւր ուղղութեամբն "Զի որ հակառակորդն ինչ՝ յամօթ լիցի, և մի ինչ ունիցի ասել զմեզ չարութեան" Տիտ. Է. 8։

Բայց չլինի կարծէք, որ Կիրակի օրն կարգածայ վշտալի կամ ձանձրալի լինելէ համար, ոչ երբէք։ ապա իրաւի երբ որ մարդիս սիրտն ընդունակ չի ելման Աստուածային շնորհաց էն չաղն ամենայն կերպ հոգևոր բանէրն էնտուր համար շատ դժար ծանր բեռն կլինի։ Արդս բնական բնութեամբ ատումայ և զրզմանայ ամենայն մերձաւորութենէ առ Աստուած. Հռով. Ը. 7։ Բայց Աստուած աղաղակումայ թէ "էտ ինչ զզվութիւնայ" Մաղ. Ա. 13։ Եզե. 18. 31։ 33. 11։ Ապա ներհակն իսկապէս զուարթուն և հոգեսէր մաքք անձանց համար Կիրակինայ լէվ եղանակ սուրբ ուրախութեան բերկրութեան. և ազատութեան. վասն Աստուծոյ ծառայելն։ Սուրբ օրն սրբայէց մինչև հարակուն, պիտի անցուցանել սուրբ հանգստեամբ. և բարեգործութեամբ։ Էտ օրն Աստուծոյ օրայ, էտ օրն Աստուած սրբէց Աշխարհիս սկսպէցն. էտ օրն Յիսուսի Քրիստոսի սուրբ Յարութեամբն պատուեցաւ. Մաղ. Ժէ. 9. և էտ օրն սուրբ Առաքեալքն հատկացրին. Գործ. Է. 7։ Յայտ. Ա. 10։ Եւ ընդհանուր Եկեղեցած հաւանութեամբ ամենայն դարում էտօրն հատկացրին վասն Աստուածային պատուոյ և փառաց։

Ապա՝ 'ի վախճանի միանգամ ևս ահեղ ձևով յորդորեմ ամենայն անձնի, քինչ էս Տեսրակն կունենայ որ սրտով և արդեամբ ջանայ հաւելացանել, և յառաջացանել բարեգոյն պահպանութիւն այս սուրբ օրին։ Օվ ընթերցող դու քեզնից սկսիր քննիր. և տես՝ ի՞նչ

մասինաս դու ինքդ մեղանչում ես Կիրակի օրն սուրբ չպահելով, և սա՞ս ի՞նչ եղանակաւ դու կարող կլինես կատարելապէս լեվ կերպիւ հաւելացանել նոյն սուրբ օրի պահպանութիւնն: եթէ ունես դու ինչարայ կամ շապ (դուքան), և եթէ ֆամլատէրաս. մտածիր թէ ո՞րքան ծանր. և մեծ պատասխանատուութիւն կայ քեզ վերայ: մանաւանդ քոյ ծառայքն. և մանկունքն քինչ Կիրակի օրն սուրբ չլինեն պահում նանցան մեղքն ըստ մեծի մասին կընկանի քեզ վերայ: Ուրեմն 'ի վերայ խղճմտանաց առաջի Աստուծոյ սովորութիւն գձիր և որքան քինչ կարօղաս տուր նոցա ամենայն աջողակութիւն. Կող. 4. 1:, վասն Կիրակի օրն սուրբ պահելն, և դու ինքըդ քեզ օրինակ շինիր նանցան խմար: Քոյ տան բանէրն էնպէս կարգադրիր. և կաւավարիր, որ նոքա առաւել ժամանակ ունենան՝ առանձին գիրք կարդալ. և աղօթք առել: Քեզ հետ քոյ տան եղելոցն ժամ տար: Կիրակի երեկոյին նոցա ժողովիր իմիասին. և տուր ուսումն Հոգևոր: Յեսուայ մտաց հաստատութիւնն քեզ օրինակ. և հիմն համարիր. որպէս ասաց թէ, "ես և տուն իմ ծառայեսցուք Տեառն. Յե. 24. 15:"

Եթէ դու գեղում բնակոզաս և ֆամլի տէրաս: Վերոյին բանէրն ըստ մեծի մասին վերաբերին քեզ: և քոյ բանգլի (գան) միջում թող Կիրակի օրն արժանապէս՝ օր սուրբ հանգստեան արևայ: Քոյ խաղաղ զգեստն. և քոյ տան եղելոց զգեստն պիտի էնպէս լինի որ էնտօվ արևայ որ Աստուծոյ սուրբ օրն պատվումաս, նմանապէս քոյ ջերմեռանդ. և հանդարտ կերպարանքն, քոյ կանոնաւոր և հաստատ ժամ գնալն, քոյ զգուշութիւնն. և զգաստութիւնն որ ոչինչ վատ բան, և վատ խօսվածկութիւն չանես, քոյ այս սիրուն նշաններն. կամ վարքէրն թող ցուցանեն քոյ պատիւն առ սուրբ օրն Աստուծոյ: Թո՛ղ քո գերմականին՝ որ Աստուած պարգևէլայ վասն իւր փառաբանութեան. և վասն քոյ իսկ մխիթարութեան՝ նանքան քեզանից հոգևոր ուսումն կանուխ ստանան, և 'ի մանկութենէ ուսանեն պատուել սուրբ օրն:

Եւ եթէ դու տան եղելոց պտիկնաս: Մտածիր քոյ պարտականութիւնն առ Աստուած. և առ քոյ իսկ հոգին: Յամէն միընդ կարողէք 'ի պատիւ Աստուծոյ մին մին բան անել որէ օգնականութիւն մատուցանելով. և յորդորելով քոյ ընկերացն վասն

սրբութեամբ պատուել օրն Տէրունական: Յիմարաց ընկերութիւն բնաւ չսիրել- և չգնալ. և փառփուչ բաներ չխօսել, և ոչ Աշխարհային խօսակցութիւն անել էտ սուրբ օրն. քանզի էսպէս մարմնաւոր բաներ խօսելովն մարդիս միտքն և սիրտն արժանի չի ելման Հոգեորականին: Կանուխ սկսիր Աստուծոյ հետևել, և յաւիտենական բաների միտ դիր. Կիրակի օրէն մեծ խորհուրդ և դիտաւորութիւնն էնայ, որ քեզ Երկնքի Ճանապարհն սարվացանի. և քեզ տանի Յիսուսի Քրիստոսի յանդիման. որ մեռաւ 'ի վերայ խաչին վասն փրկութեան քո, և մեղաւորաց: Մի թէ դու չես հասկաման որ դու կարօտաս օգնականութեան փրկչին: Եւ դու փոյթ չունե՞ս վասն քոյ հոգևոր բաներին: մտածիր ո՞րքան սարսափելիայ քոյ ներկայես կացութիւնն: Ոչինչ անզեղջ մեղաւոր՝ (որոյ մեղացն թողութիւն չլինի ելել) չի կարող Արքայութիւնն Երկնից մտանել: Ջերմեռանդութեամբ աղաչեցէք զԱստուած փոխել ձեր սիրտն, և առ իւրն դարձուցանել: Աղօթք արարէք որ հոգւոյն Սրբոյ շնորհաց ներգործութիւնն գտանէք *: Եկ իբրև տարակուսեալ մեղաւոր առ Քրիստոսն, առ



ամենաբաւ փրկիչն ձեր: մտածիր որ համէն Կիրակին երբ որ գոլմանայ մին նոր օքազ իսնայ (ամենուն ժամանակայ) գոլման քեզ խմար. որ աջողակ ժամանակ գդանես Աստուածանէ ողորմութիւն խնդրելէ և նորա ծառայելէ. էլ մէք յետացանել դառնալ առ Աստուած: Աղօթք արայ որ քոյ Կիրակի օրէրն էս կենքումն քեզ պատրաստի և արժանի առի միուս կենքումն յաւիտենական անվերջանալի Կիրակի օրին:

Որքան ահիւ և ջերմեռանդութեամբ մեք ամենեքեանս միաբան և 'ի միասին աղօթս մատուցանեմք առ Աստուած և փրկիչն մեր. որ հաճենայ շնորհել մեզ իւր օրհնեալ Սուրբ հոգւոյ շնորհն Որքան առաւել Քրիստոսին ճանաչեմք †, էնքան առաւել նորա

* Սաղ. Ճ. 12: Եղէ. ԼԷ. 27: Մաթ. Է. 7. † 1. Կոր. ԺԲ. 3:

օրն կպատուեմք և կսիրեմք: Որքան հաւատն աճումն կստանայ մեր սրտումն, էնքան առաւել մեք ղաղրն կիմանամք որպէս մեր բարձրապատիւ օգտակարութիւն քինչ Կիրակի օրն աջողակութիւնայ տալման մեզ մերձենալ առ Աստուած. ճշմարիտ հաւատացելոյ համար բովանդակ Շաբաթի միջում Կիրակի օրն մեծ ուրախութեան և ամէնօրհնեալ օրայ և սուրբ բերկրութեամբ ակնկալ մնմանայ միշտ որ Կիրակի օրն գոյ: Եւ ցանկամանայ կրկին Կիրակին յետ դառնայ: Եւ նորա բերանի խօսքն Սաղմոսի գրածի պէսայ որ ասի թէ "Որպէս սիրելի են յարկք քո՝ տէր զօրութեանց՝ ցանկայ և փափագի անձն իմ 'ի գաւիթս քո: Վասն զի լաւ է ինձ մի օր 'ի գաւիթս քո, քան զհազարս." Սաղմ. ճգ. 1. 2. 11:

Լոնդոն թիւն. 1799. էն հաստատեալ հաւատոյ ժողովքի տպած Անգղիերէն քարոզութեան Նումրայ. 358. Տետրակից Հայերէնը թարգմանութիւն ըստ զօրութեան Դասատաց Պարոն Յովհաննէս Աւդալի քաջաջան աշխատութեամբն արարեալ եղև. Ջանիւք և արդեամբ Ազնիւ Աղայ Յովանջան Աղայ Էլիազին. 'ի Կալկաթայ թիւն փրկչին. 1840:

ՎԵՐՔ

Դու յուժամ հայցես յաղօթս, Տուր 'ի սենեակ քո՝ և փակեա դրուանս քո, և հայց յաղօթս սա հայր քո 'ի ծածուկ. Մատ. Զ. 6:

Չորրորդ Պատգամ:

Յիշեսջիր զօրն Շաբաթուց սրբել զնա: Զվեց օր գործեսցես, և արասցես զամենայն զգործ քո: Յաւուրն եօթներորդի Շաբաթ Տեառն Աստուծոյ քոյ, մի՛ գործեսցես 'ի նմա զամենայն գործ քո, դու՝ և ուստր քո, և դուստր քո, ծառայ քո, և աղախին քո՝ եզն քո, և էշ քո, և ամենայն անասուն քո, և եկն քո. և պանդուխտն որ 'ի քեզ: Զի զվեց օր արար Տէր Աստուած զԵրկին և զԵրկիր. և զծով և զամենայն որ 'ի նոսա, և հանգեաւ 'յաւուրն եօթներորդի. վասն այնորիկ օրհնեաց Տէր զօրն եօթներորդ, և սրբեաց զնա: Եւէց. 20.8—11:

Բացագրութիւն:

Յիշեա և միտքդ բեր, որ . . . զԿիրակի օրն սուրբ պահես. այսինքն, մարմնաւոր գործք չանես, այլ Աղօթից և սուրբ բաներու հետ լինելով սրբութեամբ անցնես զայն օրն, այսինքն . . . ջերմեռանդական Աղօթից հետ լինելով, քարոզի ունկնդնել գնալով, և Քրիստոնէական Վարդապետութիւն սորվելու, և սորվեցնելու հետ լինելով. և ոչ թէ այսօր Կիրակի և տօնէ (խարսանիքէ. կնունքէ. նոր տարիէ. բարեկենդանէ. Շամս մինէ) ասելով՝ խաղի. և պարի, ուտելու և խմելու, մարմնաւոր հեշտութեան, և ծաղրաբանութեան հետ լինելով. քանզի այսպէս անելն մեղք անցնելէ զսուրբ . . . (Կիրակէ օրն): տես երես. 57. 'ի Գիրք Քրիստոնէականի Վարդապետութեան տպեալ 'ի Վենետիկ. 1732:

Որոնուրբ Վանն Կիրակէի. աստուծոյ
'ի Յաստուծոյ Վարդապետ է.

1 Տէրնէ գրեալ յՕրէնքն . . . . . հին,
մատամէն Սուրբ Աստուածայ . . . . . ին. ||
թէ պինտ պահես զԿիրա . . . . . կին,
և մի՛ գործեր ինչ 'ի նը . . . . . մին:
3 Րամեալ Ազգաց Ազգ մարդկայ . . . . . ին,
ամէնն ունին ըզԿիրա . . . . . կին.
ուրբաթ Տաճկին՝ շաբաթ Քրիստ . . . . տին,
օր հինգշաբաթի՝ կրուապաշ . . . . . տին:

|| Եւէց. 24.12: 31.18: 32. 15.16: 2. Օրինաց. 4.13: 5.22:

5 Ռամիկք մարդկան Հայոց Աշ • • • • • գին,
որք ոչ պահէք զԿիրա • • • • • կին •
ոչ էք նման դուք Կռապաշ • • • • տին,
և ոչ Տաճկին և ոչ Քրդ • • • • • տին։
7 Քահանայք դուք որ յԱշխարհ • • • • • հի,
... Դուք ծառայ էք Քրիստոս • • • • սի •
Թէ ժողովուրդն անօրի • • • • • նի,
արիւն նոցա 'ի ձէնջ խընդ • • • • • րի։ †
8 Եւ արդ խրատեա զամենե • • • • • սին,
որ ... սուրբ պահեն զԿիրա • • • • կին •
Թէ չըլլասեն բանից քոյ • • • • • ին, ‡
դու մի՛ ասանէր պուլսոնոս • • • • • ցին։
9 Ասա նոցա զՕրէնքն յայտ • • • • • նի, §
որ ահն 'ի սիրտ նոցա անկ • • • • • ցի •
Նա ան Աստուած է և անհո • • • • • գի,
որ սուրբ չի պահէ զԿիրա • • • • • կի։

Տես երես • 419—423• 'ի Բուն Տօմար Հայոց, եւ Տպեցաւ 'ի ռմխդ Թուականիս մերում, 'ի Կոստանդնու Պոլիս • եւ 'ի Տպարանի Յոհաննիսեան Պողոսի։

Յիշեսջիր զօր Շաբաթուն սրբել զնա • Եղէ • 20. 8։ Քանզի Երեքկին է ստունկանումն՝ 'ի Յաստուած • այսինքն սրտիւ, բերանով, և գործով • Երրակի պաշտօն նմա պարտի • այսէ • սրտին, բերանոյն և գործոյն։ Վասնայսորիկ առաջին հրամանն տուեալ եղև ընդդէմ յանցման սրտին, և վասն պտշտաման նորա։ • • Երկրորդն ընդդէմ յանցման գործոյն, և վասն պաշտաման նորա։ • • • Արդ՝ երկու իրս տեսանելի է յաղագս սորա։ Նախ՝ Թէ վասն էր կացուցաւ։ Երկրորդ, Թէ որպէս պահելի է։

Վասն առաջնոյն ասելի է • կացուցեալ եղև վասն հինգ պատճառաց։ Նախ 'ի յիշատակութիւն ստեղծման Աշխարհի, ընդդէմ ասողացն լինել զԱշխարհս յաւիտենից • • • (2. Պետ • գ• 4.6.7։)

Վասն երկրորդին գիտելի է • զի ոչ ասէ, պահեա զՇաբաթն

---

† Եղէ • 33.8։ ‡ Մաթ • 18։17• § Թուոց • 15.32—36։

իմ, այլ թէ յիշեա զօր Շաբաթուն սրբել զնա: Արդ՝ կրկին կերպիւ լինի առնել զՇաբաթն սուրբ. քանզի երբեմն սուրբ ասի՝ մաքուրն 'ի խառնմանէ ապականութեան: Եւ երբեմն ասի սուրբ, նուիրեալ իրն 'ի պաշտօն Աստուծոյ: և ըստ այսց երկուց կերպիցս պարտիմք հանդիսացուցանել զԿիրակին... այսինքն մաքուրս ընծայել զմեզ (Հռom. ԺԷ. 1.) 'ի սպասաւորութիւն Աստուծոյ: Արդ՝ առ 'ի կատարել զհրամանս զայս, երկու իրս իմացեալ լինի: Նախ՝ թէ յորմէ է զգուշանալի: Երկրորդ, թէ զինչ է առնելի:

Զգուշանալի է յերից. այսինքն 'ի մարմնական գործոց, որ և ասի ծառայական. քանզի գործ հոգւոյն է ազատ. այսինքն, կամիլ, և իմանալ. այլ սակայն կարեն լինել մարմնականքն 'ի Շաբաթոջ աւուր՝ վասն չորից պատճառաց:

Նախ՝ վասն հարկաւորութեան. ուստի և անմեղադրելի իսկ եցոյց Տէրն զԱշակերտսն, որք կորզէին զհասկ յաւուր Շաբաթու. (Մատ. Է. 23—28:) Երկրորդ, վասն օգտութեան Եկեղեցւոյ. ուստի և ասաց Տէրն, թէ քահանայքն առնեն զամենայն հարկաւոր գործս 'ի Տաճարին յաւուր Շաբաթու: (Յոհան. Է. 23:) Երրորդ, վասն օգտութեան ընկերին. ուստի և Տէրն յաւուր Շաբաթու բժշկեաց զայն, որ ունէր զձեռն գօսացեալ. և յամօթ արար զՀրէայսն տալով նոցա օրինակ զարձակել իշոյն 'ի մրսրոյն, և տանել տալ ջուր. (Մատ. 12.10.11: Ղուկ. 13.14.15:14.5:)...

Հիւանդ էր՝ և պէսէ զէս. Մատ. 25. 36:

Երկրորդ, զգուշանալի է 'ի մեղաց. որ է բեռն հոգւոյն. ուստի ասէ Երեմիա. 17. 21. Պահեցէք զհոգի ձեր. և մի՛ տանիցիք բեռն յաւուր Շաբաթու. ՝՝, քանզի այսէ գործ ծառայական. ըստ այնմ որ ասի. Յօհ. 8. 34. Որ գործէ զմեղս, ծառայ է մեղացն. և որ մեղօք պահէ զԿիրակին... ոչ է հաճոյ Աստուծոյ. զորմէ ասէ Եսայի. 1. 13.14. զՇաբաթս ձեր ատեաց անձն իմ:

Երրորդ, զգուշանալի է 'ի հեղգութենէ. քանզի զբազում չարիս ուսուցանէ դատարկակեցութիւնն. և այնպիսիքն սատակին 'ի թշնամեաց. որպէս Հրէայքն յաւուրս Մակաբայեցւոց սպանեալ եղեն յաւուր Շաբաթու. 1. Մակ. Ը. 32—41: 2. Մակ. ԺԲ. 38.39. յետոյոյ ասացին. եթէ ոք գայցէ առ մեզ յաւուր Շաբաթու մարտիցուք ընդդէմ նորա: Քանզի վասն դատարկակեցացն ասի. Ողբոյ. 1. 7. Տեսին թշնամիքն. և կատակեցին զՇաբաթս: տես երես. 499—501: կամ Յաղագս Տասն Պատուիրանաց 'ի Գիրք Մոլութեանց. Տպեալ 'ի Վենետիկ. 1773:

Հարց. Վասն էր այնչափ Շաբաթս հրամայէ պահել:

Պաս. Նախ. զի խստասիրտք էին և անողորմք. և ոչ տային հանգչիլ ծառայից և անասնոցն ||:

Երրորդ՝ զՇաբաթս հանգիստ կոչեաց Աստուած. և Օրէնս եդ որ հանգչէր մարդ 'ի մարմնական գործոց. տես երես. 371. և տես երես. 647. 'ի Գրիգոր Տաթեւացու Հարցմանց Գիրք:

|| Արդարն ողորմի անասնոյ իւրում: աղիք ամբարշտաց անողորմ են: Առակաց. 12.10. Եփես. 6. 9: Կողոս. 4.1:

Բանք Ոսկեբերանի՝ Եպիսկոպոսի Կոստանդնուպոլսոյ 'ի Ճառէից նորա 'ի վերայ առ Եփեսացիս Ընդ Ընդն: Թարգմանութիւն:

Փափաքիս, զի որդի քո լիցի հնազանդ քեզ: Ուրեմն նախ քան զամենայն սնուցանիջիր զնա "խրատու և ուսմամբ Տեառն": Մի՛ աւելորդ ինն համարիջիր նմա լսել զՍուրբ Գիրս. քանզի անդ ուսցի նախ, "Պատուեա՛ զհայր քո և զմայր քո." որով պարտի լինել քեզ շահեկան: Մի՛ ասասցես, ընթեռնուլ զՍուրբ Գիրս անկ է միայն Վարդապետաց. մի՛ թէ Վարդապետ է՞մ առնելոց զնա: Ոչ պիտոյ է նմա լինիլ Վարդապետ. արա՛ զնա Քրիստոնեայ:

Վասն զի Աշխարհականք պէտս ունին յոյժ տեղեկանալոյ Վարդապետութեանցն Սուրբ Գրոց. և մանաւանդ մանկանց պիտոյ է այս. քանզի պարզմտութիւն յայնմ հասակի յոյժ առաւելու, և ընդունի միշտ զնունդ 'ի գրութեանց անտի պատմաչաց և բանաստեղծից, որոց մոլացածին դիւցազունք են գերիք կրից նոցին: Սմին իրի պէտս ունի մանուկն դարմանոց, զոր մարթ է նմա առնուլ 'ի Սուրբ Գրոց:

(Մ՞է ապաքէն կարի անտեղի են արարքս, զի առաքիցեմք զմանկունս մեր 'ի դպրոցս և յուսումն ազգի ազգի արուեստից, և ջանայցեմք ամենայն կարեօք յառաջացուցանել զժամանակաւոր բարօրութիւն նոցա, մինչդեռ անփոյթ մնամք սնուցանել զնոսա "խրատու և ուսմամբ տեառն:)

'ի ՃՈՒԷՑ ՆՈՐԷՆ 'Ի ՀԷՐՅԱՅ ՈՒ ԿՈՂՈՍԱՑԷՍ ԹՂԹՈՅՆ:

ԹՈՒՂՄԱՆՈՒԹԻՒՆ:

Մանկունք ձեր որպէս զխոհակերս և զդեղավաճառս և զկաքաւիչս սիրողք են տարապայման դիվական երգոց և պարուց: Զ Սաղմոս ինչ ոչ գիտէ 'ի նոցանէ և ոչ մի. և ուսանիլ զայն թուի ամօթ և վաստակ ծաղրալի և ընդունայն: Վասն այն սովորութիւնք և ունակութիւնք չարք այդչափի առ հասարակ բռնացեալ տեսանին 'ի միջի ձերում: Քանզի ըստ հողոյն է և բոյսն: Յաւազուտ և աղտաղտին երկրի տեսանիցէք լոկ զբոյս անպիտանս. իսկ բոյսքն բարի և արգաւանդ գետնոյ զի՞արդ գեղաղէշ են և չքնաղ:

Օրէնք Տեառն անբիծեն և դարձուցանեն զհոգիս. Վկայութիւն Տեառն հաւատարիմ, և իմաստուն առնէ զտղայս: Արդարութիւն տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, Պատուիրանք տեառն լոյս են և լոյս տան աչաց. երկիւղ տեառն սուրբէ, և մնայ յաւիտեան: Սաղմոս. 18. 8.9:

Ի՞նչ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր, այլ 'ի պահել զբանս քո: Քան զթշնամիս իմ իմաստուն արարեր զիս 'ի Պատուիրանս քո, զի յաւիտեան իմ էին: Քան զծերս իմաստուն եղէ, զի զՊատուիրանս քո քննեցի: 'Ի Պատուիրանաց քոց իմացեալ ատեցի զամենայն ճանապարհս չարաց, զի դու Օրէնսգէտ արարեր

զիս: Ճրագ է բան քո ոտից իմոց, և լոյս տայ շաւղաց իմոց: Յայտնութիւն բանից քոց լուսաւոր և իմաստուն առնէ զտղայս: Սաղմոս. 118. 9.98.100.104.105.130:

Եւ ես յո՞ հանգեայց, եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս, և որ դողան 'ի բանից իմոց: Եսայ. 66. 2: Եւ տես ինկլիզեաբ գիրքն որոյ անուններ Bickersteth's Scripture Help.

Օրհնութիւն Սէղանոյ Հաւն Հէրաքէրոց և այլն. Գոյ էշխանաւորն, Համ քահանայն, և ասէ:

Աչք ամենեցուն 'ի քեզ յուսան. և դու տաս կերակուր նոցա 'ի ժամու, և այլն:

Մերձ է Տէր առ ամենեսեան՝ որք կարդան առ նա, ճշմարտութեամբ: Եւ ճաշակեցէ՛ք խաղաղութեամբ:

Եւ յետ յաւուրեցոյ 'ի սեղանոյն գաւէշեալ աւուցէ:

Տէր Յե՛ս լցաք 'ի բարութեանց քոց: Տացուք գոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ: Աչք Տ՚ն 'ի վերայ երկիւղածաց իւրոց. և որք յուսան յողորմութիւն նորա: Փրկել 'ի մահուանէ զանձինս նոցա. և կերակրել զնոսա 'ի սովու: Եւ լեւ-ութիւն սեղանոյս գոհութիւն Հէր Քրիստոս Աստուած փրկէ մեզ՝ որ զմեզ կերակրեցեր և լիացուցեր, քեզ փառք յաւիտեանս ամէն:

Այժմ Պատուելի Հայոց Ազգումն շատոնք վերոյ Աղօթքներն թողեալն հանդերձ գիշերին Աղօթքովն: շատոնք առանց Աղօթք մըտմանան տեղերն. և առանց Աղօթք տեղերիցն դուսան գնաման: առանց Աղօթք սեղան են նստման. և առանց գոյհութիւն մատուցանել սեղանիցն վերեն կալման: սորանց խիզանն ինչպէս Աղօթք արար կլինեն. որ իւրեանց ծնողք և ընդանիքն Աղօթք առել թողեալն սոյն այս մանկունքն ոչ Աղօթք առող օրինակ ունեն. և ոչ ուսուցիչ. և խրատիչ: Տէր Յիսուսն ողորմի նոցա. ամէն. եղեցի. և եղեցի:

Թիւն. 1797. 'ի Կալկաթայ Աղայ Սարգիս Տէր Յովհաննէսն ճրագանին որ վառվէր. իւր Դիֆտարխանիցն (օֆիսէյն) դուս չէր գոլ. մինչև իւր որդիքն Եկեսցէն գլխէ գլուխ բոլորն չկարդին միևնոյն Դիֆտարխանումն: Եւ են այժմ ոմանք կենդանի 'ի Կալկաթայ որ վերոյ պատմութիւնն ականատեսան ելել և կվկայեն վասն այս:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ

Գլուխ Քսանէրորդ Ամենէրորդ։

Օրհնութիւն ազգաց հնազանդութեանցն. 1—14։

1 Եւ եղիցի եթէ լսելով լուիցէք ձայնի Տեառն Աստուծոյ
մերոյ, զգուշանալ և առնել զամենայն պատուիրանս նորա,
զոր ես պատուիրեմ ձեզ այսօր, տացէ զքեզ Տէր Ա-
2 ստուած քո 'ի վեր քան զամենայն Ազգս երկրի. * և եկեսցեն
'ի վերայ քո ամենայն օրհնութիւնքս այսոքիկ. և գտցեն զքեզ,
3 եթէ լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ քոյ։ * Օրհնեա՛լ
4 լիցիս դու 'ի քաղաքի, և օրհնեա՛լ յանդի։ * Օրհնեա՛լ
լիցին ծնունդք որովայնի քոյ, և արմրք երկրի քոյ, անդեայք
5 արջառոց քոց, և հօտք ոչխարաց քոց։ * Օրհնեա՛լ լիցին
6 շտեմարանք քո, և համբարք քո։ * Օրհնեա՛լ լիցիս դու
7 յելանել և 'ի մտանե՛լ քում։ * Մատնեսցէ՛ Տէր Ա-
ստուած քո զթշնամիս քո և զհակառակորդս քո խորտակեալս
առաջի երեսաց քոց։ ընդ մի ճանապարհ ելցեն առ քեզ, և
8 ընդ եօթն ճանապարհս փախիցեն յերեսաց քոց։ * Առաքեսցէ
Տէր 'ի վերայ քո օրհնութիւն, 'ի շտեմարանս քո, և յամենայն
ինչ ուր մխեսցես զձեռն քո 'ի վերայ երկրին՝ զոր Տէր Ա-
9 ստուած քո տացէ քեզ։ * Կանգնեսցէ՛ զքեզ Տէր Աստուած
քո իւր ժողովուրդ սո՛ւրբ. որպէս երդուաւ հարցն քոց. եթէ
լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ, և գնասցես 'ի ճանա-
10 պարհս նորա։ * և տեսցեն ամենայն Ազգք երկրի զի անուն
Տեառն կոչեցեալ է 'ի վերայ քո. և երկիցեն 'ի քէն։ *
11 Եւ բազմացուսցէ՛ զքեզ Տէր Աստուած քո 'ի բարութիւնս,
ծննդեամբք որովայնի քոյ, և արդեամբք երկրի քոյ, և
ծննդեամբք խաշանց քոց. 'ի վերայ երկրին զոր երդուա՛ւ Տէր
հարցն քոց տա՛լ քեզ, ըստ աւուրց երկնից 'ի վերայ երկրի։
12 * Բացցէ՛ քեզ Տէր զգանձն բարութեան իւրոյ զերկինս,
տալ անձրև՝ 'ի ժամանակի իւրում երկրին քոյ, օրհնել
զամենայն գործս ձեռաց քոց. և տացէս փոխ Ազգաց բազմաց

և դու ոչ առնուցուս փոխ. * և իշխեսցես Ազգաց բազ- 13
մաց, և քեզ՝ մի՛ իշխեսցեն։ Հաստատեսցէ զքեզ Տէր Ա-
ստուծ քո 'ի գլուխ և ոչ 'ի վերջ. և եղիցիս 'ի վերս, և ոչ
'ի խոնարհ. եթէ լուիցես Պատուիրանաց Տեառն Աստուծոյ
քոյ, զոր ես պատուիրեմ քեզ այսօր պահել և առնել։ *
Եւ ոչ անցանիցես զամենայն բանիւք զոր ես Պատուիրեմ 14
քեզ այսօր՝ ոչ յաջ և ոչ յահեակ. երթալ զհետ աստուածոց
օտարաց պաշտել զնոսա։

Անէծք վասն անհնազանդեաց։

Եւ եղիցի եթէ ոչ լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ քոյ, 15
պահել և առնել զամենայն Պատուիրանս նորա զոր ես Պատուի-
րեմ քեզ այսօր, եկեսցեն 'ի վերայ քո անէծքս այսոքիկ՝ և
հասցեն քեզ։ * Անիծեա՛լ լիջիր դու 'ի քաղաքի, և անիծեա՛լ 16
յանդի։ * Անիծեա՛լ շտեմարանք քո և համբարք քո։ * 17
Անիծեա՛լ ծնունդք որովայնի քոյ և արդիւնք երկրի քոյ, և 18
անդեայք արջառոց քոց, և հօտք ոչխարաց քոց։ * Անիծեա՛լ 19
լիջիր դու 'ի մտանել՝ և անիծեա՛լ յելանել։ * Առաքեսցէ քեզ 20
Տէր զնուազութիւն և զկարօտութիւն, և ծախս 'ի վերայ ամենայ-
նի յոր մխեսցես զձեռն քո, և զորինչ առնիցես. մինչև սատա-
կեսցէ զքեզ Տէր, մինչև կորուսցէ զքեզ վաղվաղակի վասն
չարութեան գնացից քոց՝ զի թողեր զս զիս։ * Խանձե- 21
ցուսցէ Տէր 'ի քեզ զմահ, մինչև սատակեսցէ զքեզ Տէր
Երկրէն յոր դու մտանելոց ես ժառանգել զնա։ * Հարցէ 22
զքեզ Տէր տարակուսանօք, և ջերմամբ, և սարսռով, և
խեթիւք, և երկիւղիւ, և խորշակաւ, և գունով. և հալածես-
ցեն զքեզ մինչև կորուսցեն զքեզ։ * Եւ եղիցին 'ի վերայ 23
գլխոյ քոյ Երկինք պղնձի, և Երկիր 'ի ներքոյ քո Երկաթի։
* Տացէ Տէր զանձրև Երկրի քոյ փոշի. և հող յԵրկնից 24
իջցէ 'ի վերայ քո. մինչև սատակեսցէ զքեզ և կորուսցէ
զքեզ։ * Տացէ զքեզ Տէր 'ի պարտութիւն առաջի թշնամեաց 25
քոց. ընդ մի ճանապարհ ելցես 'ի վերայ նոցա, և ընդ եօթն
ճանապարհ փախիցես յերեսաց նոցա. և եղիցիս ցրուեալ ընդ
ամենայն թագաւորութիւնս Երկրի։ * և եղիցին մեռեալք 26
ձեր կերակուր թռչնոց Երկնից և գազանաց Երկրի. և ոչ ոք

27 ինչ որ ընդոստուցանիցէ: * Հարցէ զքեզ Տէր կեղով
Եգիպտացւոցն, և թանչիւք, և զայրացեալ քոսով՝ և մնով.
28 զի մի՛ կարասցես բժշկել: * Հարցէ զքեզ Տէր յիմարու-
29 թեամբ, և շլացութեամբ, և ապշութեամբ մտաց. * և
խարխափեսցես 'ի մէջօրէի որպէս խարխափիցէ կոյր 'ի խա-
ւարի: Եւ եթէ ոչ ուղղեսցես զճանապարհս քո, եղիցիս յայնժամ
զրկեալ և յափըշտակեալ զամենայն աւուրս. և ոչ ոք ինչ
30 որ օգնիցէ քեզ: * Առնուցուս կին՝ և այլ այր հանիցէ զնա
'ի քէն: շինեսցես տուն՝ և մի՛ բնակեսցես 'ի նմա: տնկեսցես
31 այգի՝ և մի՛ կթեսցես զնա: * Արջառ քո՝ սպանեալ
առաջի քո, և մի՛ կերիցիս 'ի նմանէ: էշ քո՝ յափշտակեալ
'ի քէն, և մի՛ դարձցի առ քեզ: ոչխար քո մատնեալ
32 թշնամեաց քոց, և ոչ ոք ինչ որ օգնիցէ քեզ: * Ուստերք
քո և դստերք քո՝ մատնեալք ազգի օտարի, և աչք քո կլկո-
33 ցեալ հայիցին 'ի նոսա, և ոչ հասանիցէ ձեռն քո: * Զբերս
երկրի քոյ. և զամենայն վաստակս քո կերիցէ Ազգ, զոր դու
ոչ գիտիցես: Եւ եղիցես զրկեալ և խորտակեալ զամենայն
34 աւուրս: * և եղիցես յիմարեալ վասն տեսլեանց աչաց
35 քոց զոր տեսանիցես: * Հարցէ զքեզ Տէր չարաչար
կեղով 'ի ծունկս և 'ի սրունս. և ոչ կարասցես բժշկել 'ի թա-
36 թից ոտից քոց մինչև ցգլուխ քո: * Տարցէ զքեզ Տէր
և զիշխանսն զոր կացուսցես 'ի վերայ քո՝ յԱզգ որ ոչ գիտիցես
դու՝ և ոչ Հարք քո. և պաշտեսցես անդ զաստուածս օտարս,
37 զփայտեղէնս և զքարեղէնս. * և եղիցես յառակ և 'ի ցոյց
և 'ի զրոյց 'ի մէջ ամենայն Ազգաց՝ յոր տանիցի զքեզ Տէր
38 անդր: * Սերմն բազում հանցես յանդի, և սակաւ ժո-
39 ղովեսցես. զի կերիցէ զայն մարախ: * Այգիս տնկեսցես
և գործեսցես, և գինի ոչ արբցես, և մի՛ ուրախ լիցիս
40 'ի նմանէ. զի կերիցէ զայն՝ որդն: * Եւ եղիցին ձիթենիք
յամենայն սահմանս քո, և իւղով ոչ օծցիս, զի թափեսցին
41 ձիթենիքն քո: * Ուստերս, և դստերս ծնցիս, և ոչ
42 լինիցին քո. քանզի երթիցեն 'ի գերութեան: * Զամենայն
ծառատունկ քո և զարդիւնս երկրի քոյ հարցէ թրթուր:
43 * Եկն որ 'ի քեզ ելցէ քան զքեզ վերո 'ի վերոյ,

և դու ինչցես վայր 'ի վայր։ * Նա տացէ՛ քեզ փոխ, 44
և դու ոչ տացես նմա փոխ։ Նա՛ եղիցի գլուխ, և դու
եղիցես վերջ։ * Եւ եկեսցեն 'ի վերայ քո անէծքս 45
այսոքիկ, և հալածեսցեն զքեզ. և հասցեն քեզ մինչև սատա-
կեսցեն զքեզ, և մինչև կորուսցեն զքեզ։ Զի ոչ լուար ձայնի
Տեառն Աստուծոյ քոյ, պահել զՊատուիրանս նորա և զիրաւ-
ունս նորա զոր Պատուիրեաց քեզ։ * Եւ եղիցին 'ի քեզ 46
նշանք և արուեստք, և 'ի զաւակի քում մինչև յաւիտեան.
* փոխանակ զի ոչ պաշտեցեր զՏէր Աստուած քո ուրախու- 47
թեամբ և ճշմարիտ սրտիւ։ Վասն բազմութեանդ ամենեցուն *
պաշտեսցես զթշնամիս քո՝ զորս առաքեսցէ 'ի վերայ քո Տէր, 48
'ի սով և 'ի ծարաւ և 'ի մերկութիւն և 'ի նուազութեան
ամենայնի։ և դիցէ անուր երկաթի 'ի պարանոցի քում մինչև
սատակեսցէ զքեզ։ * Ածցէ 'ի վերայ քո Ազգ 'ի հեռաստանէ 49
'ի ծագաց երկրի իբրև զխոյանալ արծուոյ. Ազգ՝ զորոյ ոչ
լսիցես զձայն նորա. * Ազգ՝ ժպիրհ երեսոք. որ ոչ 50
աչառիցէ երեսաց ծերոց, և ոչ ողորմեսցի տղայոյ. * և կերիցէ 51
զծնունդս խաշանց քոց, և զարդիւնս երկրի քոյ. և ոչ թողու-
ցու քեզ ցորեան, գինի, եւղ, զանդեայս արջառոց քոց, և
զհօտս ոչխարաց քոց, մինչև կորուսցէ զքեզ։ * Եւ նեղես- 52
ցէ զքեզ յամենայն քաղաքս քո, մինչև կործանեսցին Պարիսպք
քո բարձրացեալք և ամուրք՝ յորս դուն յուսացեալ իցես
յամենայն երկրին քում։ և նեղեսցէ զքեզ յամենայն քաղաքս
քո՝ զորս ետ քեզ Տէր Աստուած քո։ * Եւ կերիցես 53
զծնունդս որովայնի քոյ. զմիս ուստերաց քոց և զդստերաց
քոց՝ զոր ետ քեզ Տէր, յանձկութեան քում և 'ի նեղու-
թեան քում, որով նեղեսցէ զքեզ թշնամին քո †։ * Գիրգն 54

թարգմանութիւն։

†. Ծանօթութիւն։ Հոսկ յԷպոյ ըստ Հոովմայեցւոց պաշարէցին, յաւուրսն ասէին և խպաս հուծանէցին զԵրուսաղէմ. և յընթացս այսր պաշարման ասէին այնման սաստիկ էր և անպանէլի, մինչ ասէ և հանայ քաղցումն և քաղցումն հէրին զղաւակս իւրեանց, և կերուցին զէրուսաղէմ զայն ասպատէլի, զի մի՝ այլ 'ի քաց հուրէացեն զայն 'ի յեռաց

որ 'ի քեզ և փափուկն յոյժ, չարակնեսցէ յեղբայր իւր և
'ի կին ծոցոյ իւրոյ, և 'ի մնացեալ որդիսն՝ որ մնայցեն նմա,
55 * տալ միում 'ի նոցանէ 'ի մարմնոյ որդւոց իւրոց յորոց ուտի-
ցէ. վասն չմնացելոյն նմա ինչ. յանձկութեանն քում և
'ի նեղութեան. որով նեղիցեն զքեզ թշնամիքն քո յամենայն
56 քաղաքս քո: * Եւ գիրգն որ 'ի քեզ և փափուկն յոյժ,
որոյ ոչ ելցէ ոտին իւրոյ առեալ զփոքրձ գնալոյ 'ի վերայ երկրի
վասն փափկութեան իւրոյ և գրգութեան, չարակնեսցէ յայր
57 ծոցոյ իւրոյ: և զուստրն իւր, և զդուստր. * և զձագն
ելեալ 'ի միջոյ իւրմէ, և զծնունդն զոր ծնանիցի՝ խորովեսցէ
'ի նոցանէ՝ և կերիցէ. և վասն նուազութեանն յամենայնէ թաքու-
սցէ յանձկութեանն և 'ի նեղութեանն, որով նեղիցէ զքեզ
58 թշնամին յամենայն քաղաքս քո: * Եւ եթէ ոչ լուիցէք
առնել զամենայն բանս օրինացս այսոցիկ, զգրեալս 'ի գիրս
յայսմիկ, երկնչել 'ի պատուական և 'ի սքանչելի անուանէ
59 Տեառն Աստուծոյ քոյ. * նորանշան արասցէ Տէր զհարուածս
քո, և զհարուածս զաւակի քոյ, զհարուածս մեծամեծս և
60 զարմանալիս, և զցաւս չարաչարս և զկարևորս: * Եւ
ածցէ 'ի վերայ քո զամենայն ախտս չարաչարս զԵգիպտացւոցն՝
յորմէ սոսկայիրն յերեսաց նոցա. և մխեսցին 'ի քեզ: *

նոցա: Կանայք խլէին զհէրաիո

 'ի բէրանոց արանց, և ոչդէր 'ի բէրանոց հարց, և ոչ առաւել ողբալին է՝ հարց 'ի բէրանոց պղայոց իւրեանց: Գիրք. Է. գլուխ. 10. հատուած. 3:

Յերուսաղէմ պան, էլէ գոյր ուրէ էրկոյլ ինչ հէրաիէոյ, յաուանէր հուր ասուրէ, և հալեաւեին բարէհամ և աղգանամ հաուէին ընդ ծիմեանս, 'ի բաց խլէլով յէրէրաց զանուանս պէրոց. Գիրք. Ղ. գլուխ. 3. հատուած. 3:

Կին ոմն՝ էրկեալի ծիներեամբ և ճոխութեամբ, յոչ ամ բանաուրն համ զօրանամն հողոպեալ էին զամենայն ինչս և զարացուածս նորա, եթէալ զէր էամ հանուէ ‡ ասնդրայ՝ էհէր զհէան, և լեաւցեալ զմրաս հէան՝ պահեայ ուրել յայլոմ հուաւէր: տես Յովսեպոս յաղագս Պատերազմին. Գիրք. Ղ. գլուխ. 3. հատուած. 4: Դասասաց Պարոն Յովհանէս Աւդալ: ‡ Եսա. 49. 15:

61 Եւ զամենայն հիւանդութիւնս. և զամենայն հարուածս
գրեալս 'ի Գիրս Օրինացս այսոցիկ, ածցէ Տէր 'ի վերայ քո
62 մինչև սատակեսցէ զքեզ։ * և մնասջիք թուով սակաւք.
փոխանակ զի էիք դուք իբրև զաստեղս երկնից բազմութեամբ.
63 և ոչ լուարուք ձայնի Տեառն Աստուծոյ ձերոյ։ * Եւ
եղիցէ որպէս ուրախ եղև 'ի ձեզ Տէր բարի առնել ձեզ,
և բազմացուցանել զձեզ, նոյնպէս ուրախ լինիցի Տէր 'ի ձեզ՝
սատակել զձեզ. և բարձջիք յերկրէն յոր մտանելոց էք
64 ժառանգել զնա։ * Եւ ցրուեսցէ զքեզ Տէր Աստուած
քո ընդ ամենայն Ազգս, 'ի ծագաց երկրի մինչև 'ի ծագս
երկրի. և ծառայեսցես անդ աստուածոց օտարաց, փայտից և
65 քարանց՝ զորս ոչ գիտէիր դու և հարք քո։ * Այլև
յազգն յայնոսիկ ոչ հանգուսցէ զքեզ, և ոչ լինիցի կայ
թաթիւ ոտից քոց. և տացէ քեզ անդ սիրտ տրտմեալ, և
66 աչս սորեալս, և անձնհարեալ։ * Եւ եղիցին կեանք քո
կախեալ առաջի աչաց քոց, և զարհուրեսցիս զցայգ և զցերեկ.
67 և ոչ հաւատասցեն կենացն քոց։ * Ընդ առաւօտս ասիցես՝
թէ ե՞րբ լինիցի երեկոյ. և ընդ երեկոյս ասիցես՝ թէ ե՞րբ
լինիցի առաւօտ, 'ի զարհուրանաց սրտի քոյ զոր երկնչիցիս,
68 և 'ի տեսլեանց աչաց քոց զոր տեսանիցես։ * Եւ դարձուսցէ զքեզ Տէր անդրէն յԵգիպտոս նաւօք հազարաւոր
զօրօք. և ընդ ճանապարհն ընդ նոյն՝ ոչ յաւելուցուք տեսանել զնա. և վաճառեսջիք անդ թշնամե՛աց ձերոց 'ի ծառայս
և յաղախնայս. և ոչ ոք լիցէ որ գնիցէ։

Եւս տես վասն հնազանդից. և անհնազանդից Ղևտացոց. 26.
Գլուխ։

Մի յաւելուցուք ինչ 'ի բանն՝ զոր ես Պատուիրեմ ձեզ, և մի՛
հատանիցէք 'ի նմանէ։ պահեսջիք զհրամանս Տեառն Աստուծոյ
մերոյ զոր ես Պատուիրեմ ձեզ։ 2. Օրինաց. 4. 2։

Ամենայն բանի զոր ես Պատուիրեմ քեզ այսօր՝ զգուշանայցես
առնելոյ. մի՛ յաւելուցուս 'ի նա, և մի՝ հատանիցես 'ի նմանէ։
2. Օրինաց. 12. 32։ Եւս տես Յայտնութիւն. 22.18—21։

THE

NAMES AND ORDER

OF ALL THE

BOOKS OF THE OLD AND NEW TESTAMENT,

WITH

THE NUMBER OF THEIR CHAPTERS.

Անուանք և հարգ ամենայն գրոց հին և նոր Կտակարանի հանդերձեալ
ընտրեալ գրոց նոցա ըստ Աստուածաշունչն ընդունելոյ։

The Books of the Old Testament.

Գրոց հնոյ Կտակարանի։

Ծնունդք ոանի գրոցս	50	2. Յամանակագրութեան	36	Դանիէլ Մարգարէ	12
Ելք	40	Եզրայ (հայոց 2. Եզրաս)	10	Ովսէայ	14
Ղևտացւոյն	27	Նեեմայ (հայոց 3. Եզրաս)	13	Յովելեայ	3
Թիւք	36	Եսթեր	10	Ամոսայ	9
Երկրորդ Օրէնք	34	Յովբ	42	Աբդեայ	1
Գիրք Յեսուայ	24	Սաղմոսք Դաւթի	150	Յովնան	4
Դատաւորք	21	Առակք Սողոմոնի	31	Միքիայ	7
Հռութ	4	Եկեղեսիաստէս	12	Նաւում	3
Առաջին Սամուէլ	31	Երգ Սողոմոնի	8	Համբակում	3
Երկրորդ Սամուէլ	24	Եսայի Մարգարէ	66	Սոփոնիայ	3
Առաջին թագաւորաց	22	Երեմիայ	52	Անգէայ	2
Երկրորդ թագաւորաց	25	Ողբք	5	Զաքարիայ	14
Յ. Յամանակագրութեան	29	Եզեկիէլ	48	Մաղաքիայ	4

The Books of the New Testament.

Գրոց Նորոյ Կտակարանի։

Մատթէոս ոանի գրոցս	28	Թուղթ առ Եփեսացւոց	6	Թուղթ առ Եբրայեցիս	13
Մարկոս	16	Փիլիպեցւոց	4	Յակոբայ	5
Ղուկաս	24	Կողոսացւոց	4	Առաջին Պետրոսի	5
Յովհաննէս	21	Առաջին թեսաղոնիկեցւոց	5	Երկրորդ Պետրոսի	3
Գործք Առաքելոց	28	Երկրորդ թեսաղոնիկեցւոց	3	Առաջի Յովհաննու	5
Թուղթ առ Հռովմայեցիս	16	Առաջին Տիմոթէոս	6	Երկրորդ Յովհաննու	1
Առաջին Կորնթացւոց	16	Երկրորդ Տիմոթէոս	4	Երրորդ Յովհաննու	1
Երկրորդ Կորնթացւոց	13	Տիտոս	3	Յուդայի	1
Թուղթ առ Գաղատացւոց	6	Փիլիմոն	1	Յայտնութեան	22

Գիրք անյայտ հոմ անկանոնք են ըստ Անգլիական Եկեղեցւոյն։

1. Եզրաս * - - - 9	Իմաստութիւն - - - 19	Պատմութիւն Հրաշանաց
2. Եզրաս † - - - 16	Էկլեսիաստիկոս - - - 51	Բէլ Կուռքն և Վիշապն
Տոբիա - - - - - 14	Բարուխ հանդերձեալ - -	Աղօթք Մանասէի
Յուդիթ - - - - - 16	Թղթոյ Երեմիայի - 6	Աստուծոյ Մատեանն 16
Մնացուածք Եսթերայ ‡ - 6	Երգ Երեց Մանկանց .	Երկրորդ Մատեան 15

Եւ Երրորդ Մատեան։

* ոչ է Լատինացւոց Եզրաս Երրորդ։ Եւ Հայոց Եզրաս աստուածն։

† ոչ է Հայոց Եզրաս Չորրորդ։

‡ ոչ է Հայոց Եսթերայ 10. գլխի. 4. հատուածքն ծինչև. 16. գլխի վերջն։

Իսկ անկանոնք են անընդունելիք. և անարգեալք եկեղեցւոյ. որպիսի են աւետարանն Թովմայի. գիրք Տանիէլ Յիսուսի. որ է. 214։ Ճեմարան գիրքերէնաց որ էրէրերք 'Ի Վենետիկ. 1818։

'Ի Պարիսաւոյ ժողովն արարեալ 'է Սէոն կամաղէիսոէ՝ 'է ՌԷ թիւն Տաք. 768. յօրինակ էնչ, 'է 25. Հանոնքն՝ Ընդէր ընդ այլ աւուրբ գրեալ ոչ գրուի (Սիրաք) Բայց օրինաւորքի ընթերցուածս 'է ուսուցին Տանիէլոյ։ որ է. 192. Գաւէթ Աղօթքս ը-ծանաբ եւ գրեալ 'Ի Վենետիկ. 1801։ Եւ որ է. 154. 'է նոյն Գաւէթն վերագրեալ 'է Վենետիկ. 1824։

Յաւելուած։

Սէրտ։ Խօսք Սէրտոյ։ Եղբ երրորդ։ Աղօթք Մանասէի։ Թուղթ Կորնթացւոց աւ Պաւղոս։ Հանգիստ Յովհաննու։ Աղէր Եւթանց։ Եւ Եւ է Սաղմոս էնգանագէր Դաւթի արքայի Ներս։ Եւ Եւ Զորրորդ յաւելուած 'է գրեալ վերջոյ աւանէլ զներս Կորնթացւոց աւ Պաւղոս աւարտեալ. Հանդերձեալ պարապանէաւ նորին աւարտելոյ.. 'Էպարքսագրութիւն Խորենացւոյն գրագրեցին 'է Լոնդոն Յաղին. 1736։ որ Ամենայն Հարք Աւանդին։ Հարք երրորդ. Եւ Հարք չորրորդ։ գրեալ 'է Վենետիկ. 1805։

Իմաստութիւն. որ 'է յուլիսի Սաղոմանի էնգագրի։ Եւ Յեսուայ որդւոյ Սիրաքայ Գիրքն՝ Եւ Յուդիթ՝ Եւ Տոբիա՝ Եւ պատարագ. ոչ էն նէր Կանոնաւ։ որ 'Ի հին Եւ Նոր Կտակարանն գրեալ Յաղագս Աստուծոյ. 'Ի թուական փրկչին. 1666։ Իսկ հայոց. աՀՃԺԵ։

Հայոց հին Կտակարանն երկու Սաղմոս Տասն ունի։ Եւ. 113. Սաղմոսաւանդ. երկու Սաղմոս է։ Եւ Եւ. 114. Սաղմոսն ծին Սաղմոսէ. երկու Սաղմոս է շինվել։ Ներմանագրէսէլ. 147. Սաղմոսն ծին Սաղմոսէ. այս երկու Սաղմոսէ շինվել։ որ Յաղագս Աստուծոյ գրած Աստուածն։ Եւ այլ Աստուածք։

THE CHARACTER
OF
GOOD SUNDAY-SCHOLARS.

Յանգամանք բարի Աշակերտաց Կիւրակէի։

Թարգմանութիւն։

1. Փափաքեն նոքա ընթերնուլ և իմանալ զՍուրբ Գիրս, որք կարող են առնել զնոսա իմաստուն 'ի փրկութիւն յաւիտենական՝ 'ի ձեռն հաւատոց որ 'ի Քրիստոս Յիսուս։ 2. Տիմ. 3. 15։

2. Քանան միշտ լինել Յուսումնարանի 'ի ժամու, զի լիցին 'ի միասին 'ի սկսուած անդ Աղօթից, և մի կորուսցեն զիւրեանց պատուական ժամանակ Շաբաթու, և մի տրտմեցուսցեն զքաղցր Ուսուցիչս իւրեանց։ 1. Թես. 5. 12. 13։

3. Քանան լինել հանդարտ, և մտադիր 'ի տալ իւրեանց զդաս, քանզի գիտեն, թէ իմաստութիւն է գլխաւոր իր ինչ, և թէ երկիւղ Տեառն է սկիզբն իմաստութեան։ Առակ. 1.7։

4. Վարին բարեպէս 'ի Տանն Աստուծոյ, և յորժամ գնան 'ի սուրբ տեղին յայն և դառնան անտի։ Ոչ մոռնան զոր ինչ լսեն անդանօր, այլ պահեն և առնեն զբանն Աստուծոյ։ Մատ. 7.24։ Յոհ. 14.21։

5. Յառաւօտու և Յերեկոյի Աղօթեն առ Աստուած Ամենակալ վասն թողութեան մեղաց իւրեանց՝ 'ի ձեռն չարչարանաց և մահուան Տեառն Յիսուսի Քրիստոսի, և ապա աղաչեն զնա տալ զՍուրբ Հոգի իւր առ 'ի ուսուցանել զինքեանս և առնել զնոսա սուրբս և բարիս։

6. 'Ի տան են երախտագէտ և հնազանդ ծնողաց իւրեանց. սիրեն զեղբարս և զքոյրս իւրեանց. սիրեն նա և զամենայն ընկերս իւրեանց։

7. Ժամանակ իւրեանց ոչ անցուցանեն 'ի զուր, այլ միշտ ընթերնուն և ուսանին զբարի մատեանս. Գործ. 17. 11. և սիրեն մանաւորապէս զՍուրբ Աստուածաշունչն, և համարին զայն լաւ քան զոսկի և քաղցր քան զմեղր։ Սաղ. 18.11։ 118.103։

8. Ոչ երբեք պարապ մնան պղերգութեամբ, այլ ջերմեռանդութեամբ ծառայեն Տեառն, և ժրութեամբ և փութաջանութեամբ կատարեն յանապազ զգործս իւրեանց։ Հռոմ. 3.19։ 2. Թես. 3.10։

9. Հեռի մնան յընկերակցութենէ այնոցիկ, որք խօսին զսուտ, երդնուն և գողանան. Սաղ. ՃԾ. և սիրեն զբարի մարդիկ. քանզի գիտեն թէ որ գնայ ընդ առն իմաստնոյ, լիցի իմաստուն. բայց նա՝ որ է ընկեր յիմարաց, անկցի 'ի յիմարութիւն նոցա։ Առակ. 13.20։

10. Քաջ տեսանեն, թէ Ղեղաւորէն ինքեանք. հաւատան Յիսուս Քրիստոս 'ի փրկութիւն հոգւոց իւրեանց. գիտեն, զ

535

Հով իւ բարի, որ ետ զանձն իւր վասն ոչխարաց. տեղեակ են, զի ժողովէ նա զգառինս բազկօք իւրովք կրէ զնոսա 'ի ծոց իւր. Եսա. 40.11, և տայ նոցա զկեանս յաւիտենականս. և հաւաստի են, թէ ոչ կորնչիցին նոքա երբէք, և ոչ ոք հանցէ զնոսա 'ի ձեռաց նորա: Յոհ.10.28:

թուականութիւն Հայոց և Հռոմայեցւոց:

Մէկ.	ա.	I	Վան	1	Քսան մէկ	իա.	XXI.	21
Երկու	բ.	II	Դու	2	Քսան հինգ	իե.	XXV.	25
Երեք	գ.	III	Լեռ	3	Երեսուն	լ.	XXX.	30
Չորս	դ.	IV	Փոռ	4	Քառասուն	խ.	XL.	40
Հինգ	ե.	V	Փոյեվ	5	Յիսուն	ծ.	L.	50
Վէց	զ.	VI	Սէտ	6	Վաթսուն	հ.	LX.	60
Եօթն	է.	VII	Սէվեն	7	Եօթանասուն	ղ.	LXX.	70
Ութն	ը.	VIII	Հէթ	8	Ութսուն	ճ.	LXXX.	80
Ինն	թ.	IX	Նէթեն	9	Հիսուն	մ.	XC.	90
Տասն	ժ.	X	Դէն	10	Հարիւր	ն.	C.	100
Տասն մէկ	ժա.	XI	Լէվեն	11	Երկու հարիւր	շ.	CC.	200
Տասն երկու	ժբ.	XII	Դուլեվ	12	Երեք հարիւր	պ.	CCC.	300
Տասն երեք	ժգ.	XIII	Լաւորդեն	13	Չորս հարիւր	ռ.	CCCC.	400
Տասն չորս	ժդ.	XIV	Փոռդեն	14	Հինգ հարիւր	ս.	D.	500
Տասն հինգ	ժե.	XV	Փէփդեն	15	Վէց հարիւր	տ.	DC.	600
Տասն վէց	ժզ.	XVI	Սէտորդեն	16	Եօթն հարիւր	ւ.	DCC.	700
Տասն եօթն	ժէ.	XVII	Սէվենդեն	17	Ութն հարիւր	փ.	DCCC.	800
Տասն ութն	ժը.	XVIII	Հէթդեն	18	Ինն հարիւր	ք.	DCCCC.	900
Տասն ինն	ժթ.	XIX	Նէնդեն	19	Հազար	օ.	M.	1000
Քսան	ի.	XX	Դուսան	20	Տասն հազար	ֆ.	XM.	10000

Է գիրս 'ի Տպարանէ Մկրտչաց 'է Կալկաթայ. 1844:
Տուէ գին՝
BAPTIST MISSION PRESS.